Նոյեմբեր ամսուայ անուճը ծագում է լատիներէն Novembre բառից, որ նշանակում է իններորդ: Հասկնալիցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս հիմա, այլ Մարտ ամսից: Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ: Իսկ վրաստանում, որովհետեւ այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիորգ-օրայ, կամ Գիրգորիս-թվէ, որ նշանակում է Գէորգայ տօնի ամիս:

- 1 11 Ուր. ԴԷ. Պահք: 15
- 2 15 Շք. ԷՅ. Տօն ամենալն Սրբոց - Հնոց և Նորոց, լայտից և 16
անկալտից:
- 3 16 ✠ Կիր. ԷՅ. Ը. Կիր. զկնի Ս. Խաչի: Հարսանիք: 17
- 4 17 Բշ. ԴՅ. Ս. Ստեփաննոսի Հոովմայ հայրապետին և քահանայիցն, սարկաւազացն և ժողովրդոցն: 18
- 5 18 Գշ. ԴԷ. Ս. Ակիմիանիայ եպիսկ. Յովսէփայ քահ. Ալիթա- 19
լայ սարկաւազին և Պրատոնի վկային:
- 6 19 Գշ. ԴՅ. Պահք: 20
- 7 20 Նշ. ԴԷ. Ս. հարապետացն Մետրոփանոսի, Աղէքսանդրոսի, Պողոսի խոստովանողին և Ս. նօտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի: 21
- 8 21 Ուր. ԴՅ. Պահք: Յերեկոյեան նախասօնակ: 22
Լատ. Բնծալումն Ս. Աստուածածնի:
- 9 22 Շք. ԴՅ. Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և 23
ամենալն երկնային զօրացն:
Շ վր. քո. լա. Անանայն եւ.
- 10 23 ✠ Կիր. ԷՅ. Թ. Կիր. զկնի Ս. Խաչի: Հարսանիք: 24
Սրեգակն ի Աղեղնաւորն մտանէ:
- 11 24 Բշ. ԷՅ. Ս. Մելիտոնի Անտիօքայ հայրապետին և Մինասայ եպիսկոպոսացւոյն և միւս Մելիտոսի եպ. Բուրայ քահանային և Շինու սարկաւազին: 25

12 25 ԳՂ. 43. Ս. Դիմիտրեայ վկային և Բասիլիկոսի քահանային: 26
 13 26 ԳՂ. 44. Պահք: 27
 14 27 ԵՂ. ԴՅ. Ս. Գուրբասայ, Սամուէասայ, Աբիրայ սարկաւ- 28
 զին, Ռամանոսի միայնակեցւոյն, Մանկանն խոստովանողի
 և Հիւսիքոսի զինաւորին:
 3. և Ռուսայ՝ Բարեկենդան Ծննդեան պահոց:
 15 28 Ուր. ԴԷ. Պահք: 29
 16 29 Ծր. ԴԶ. Ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի:
 Ծնունդ լս. Զատիկն է:
 17 30 ✠ Կիր. ԴԸ. ԺԱ. Կիր. զկնի Ս. Խաչի:
 Բարեկենդան Յիսնայի պահոց:
 18 1 ԲՂ. ԷԳ. 1. օր Յիսնակի պահոց: 3
 19 2 ԳՂ. ԷԴ. 2. օր Յիսնակի պահոց: 4
 20 3 ԳՂ. 45. 3. օր Յիսնակի պահոց: Յերեկ, նախատօնակ: 5
 21 4 ✠ ԵՂ. 46. 4. օր Յիսնակի պահոց: ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍ- 6
 ՏՈՒՄԱԾՆԻ ի Տաճարն:—Եւ Ռուսայ:
 22 5 Ուր. ԴԹ. 5. օր Յիսնակի պահոց: 7
 23 6 Ծր. ԴԿ. Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հա- 8
 րապետին և Միւստայ եպիսկոպոսին:
 24 7 ✠ Կիր. ԴԿ. Ա. Կիր. Յիսնակի: Հարսանիք: 9
 25 8 ԲՂ. ԴԶ. Ս. Կոստանայն Յուլիանիայ և Վասիլուհոյ: Աբրա 10
 համու և Խորենայ անարծաթ բժշկացն, Կողմայի և Դա
 միանոսի և Ատոռածատրայ վկային:
 Առ. քո. լս. Զատիկն է:
 26 9 ԳՂ. ԷԶ. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարագրոսի, Պրո- 11
 պոսի, Անդրոնիկոսի, Ռնեսիմեայ և այլոց աշակերտացն
 Պողոսի:
 27 10 ԳՂ. ԷԷ. Պահք: 12
 28 11 ԵՂ. 48. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տոռոմե- 13
 նայ եպիսկոպոսին:
 29 12 Ուր. ԴԸ. Պահք: Յերեկուեան նախատօնակ: 14
 30 13 ✠ Ծր. ԴԸ. Ս. Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց 15
 ԹԱԴԷՆՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՆՈՍԻ.

Այս ամսուայ 1-ից մինչև 30 ը օրը պակասել է 1 ժ. 19 ր.

ԱՍՏՂԱԳԷՏՆԾՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր.—Աղեղնաւորն. Այս համաստեղութեան տակ
 ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շուտ զտնող:

առողջակաղմ, ճշմարտասէր, հաստատամիտ, վարուող, աշխատա-
 սէր, ի բնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և խր. ունեցած լաւ
 լատկութիւններ չամեմատ անչափ ինքնասէր:

Իսկ ծնուած աղջիկը՝ զործունեայ և սչալուրջ, աշխատասէր,
 բարեպաշտ, բարի և սրտով ուրախ: Գլխաւոր պակասութիւնը իւր կաս-
 կածոս բնաւորութիւնն է:

Նոյեմբերին ծնուածներն սոհասարս կարգիւնաբերութեան մէջ
 բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր: 33
 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չա-
 վաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խորին ծերութեան կը
 հասնին:





ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 օր

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական decembre բառից, որ նշանակում է տասներորդ: Այսպէս անուանեց ամիսների հիմնադիր Հռոմուլոսը տարուայ տասներորդ ամիսը: Մեր նախնիք այս ամիսին անուանել են Քաղոց: Որովհետև վրաստանում այս ամիս 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդեան տօնը, այս պատճառաւ այս ամիսին վրացիք անուանել են Քրիստիչօբայ, կամ Քրիստիչօբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս:

| | | | |
|-------|------|---|----|
| 0ր 68 | 1 14 | ✠ Կիր. Էջ. Բ. Կիր. զկնի Յիսնակի: Հարսանիք: | 16 |
| | | Լր. լուսնի Զնաբէր Էրմանէ: | |
| | 2 15 | Բշ. Էջ. Ս. Գեներիոսի եպիսկոպոսին և Մերկեախոսի զի- նաւորին, Յակովբայ և Իրաւարտաց: | 17 |
| | 3 16 | Գշ. Էջ. Ս. Մինատայ, Կրմողինեայ և Գրարոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալէքսիանոսի: | 18 |
| | 4 17 | Գշ. Էջ. Պահք: | 19 |
| | 5 18 | Եշ Էջ. Ս. Հարցն Եղիպտոսացոցն, Պօղոսի, Պօղայ, Մակա- ռայ, Եւագրի, Յովհաննու Գրնեցւոյն, Յովհաննու կարճա- հասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Գանիէլի, Արապի- օնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց Ս. հարցն: | 20 |
| | 6 19 | Ուր. Էջ. Պահք: Ռուսաց՝ Ս. Նիկողայոսի Աքանչելադործին: | 21 |
| | 7 20 | Շր. Էջ. Ս. Նիկողայոսի Զմիւռնացւոյ Աքանչելադործ հալ- ըպեալին: | 22 |
| | 8 21 | ✠ Կիր. Էջ. Գ. Կիր. զկնի Յիսնակի: Բարեկենդան Ս. Յա- կովբայ պահոց: Յերեկ. նախատօնակ: | 23 |
| | | Վր. ըս. լս. Զնաբէր էշ. | |
| | 9 22 | ✠ Բշ. Էջ. Պահք: Տօն ՅՂՈՒԹԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ: | 24 |
| | | Սրեգակն իլԱլծեղջերն մտանէ 0 Ժ. 52 ր. երեկ. Զմեռ- նամուտ և արեւադարձ. ցերեկն սկսանի երկարիլ և զիշերն կարճանալ: | |

| | | | |
|-------|-------|--|----|
| 0ր 68 | | ԴԵԿՏԵՄԲԵՐ | |
| | 10 23 | Գշ. Էջ. Պահք: Ս. Կոռնելիոսի հարեւրապետին և Շմաւոնի աղգակնին Քրիստոսի, որ խաչեցաւ Վրուսաղէմ, Պողի կարպոսի հարապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն՝ որք Ա- ղմէս կատարեցան: | 25 |
| | 11 24 | Գշ. Էջ. Պահք: | 26 |
| | 12 25 | Եշ. Էջ. Պահք: Ս. Եւտրատիոսի, Օգսենտիոսի, Եւզենիո- սի, Ուրիեստէսի և Մարգարիոսի: | 27 |
| | | Լատ. Ծնունդ Տեառն: | |
| | 13 26 | Ուր. Էջ. Պահք: Յերեկոյին նախատօնակ: | 28 |
| | 14 27 | Շր. Էջ. Ս. Յակովբայ Մծբնայ հարապետին, Մարուգէի ճղնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին: | 29 |
| | 15 28 | ✠ Կիր. Էջ. Գ. Կիր. զկնի Յիսնակի: Հարսանիք: | 30 |
| | 16 29 | Բշ. Էջ. Ս. հարապետացն Իգնատիոսի, Ազղէի և Մարու- թայ եպիսկոպոսին: | 1 |
| | | Ծն. լս. Սաւանտէնէ: | |
| | 17 30 | Գշ. Էջ. Սրբոց Թէոպոմպալ եպիսկոպոսին, Թէոփնայ վկ. և շորից զինւորացն Բաստի, Եւսերի, Եւտիզի և Բասիլիկեայ: | 2 |
| | 18 31 | Գշ. Էջ. Պահք: | 3 |
| | | Եշ. Էջ. Ինդոսի, Դոմինի և Գեղերիկոսի քահանային և Եր- կուց ըրրոցն, որք այրեցան Եկեղ. Նիկովիդացոց: | |
| | 19 1 | Ըստ նոր տոմարի Տարեմուտ և լուսնարի 1-ն 1913 թ. Լատ. տօն Տնօրէնութեան Տեառն: | 4 |
| | 20 2 | Ուր. Էջ. Պահք: | 5 |
| | 21 3 | Շր. Էջ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախավկայ և անդրանիկ թագաւո- րին մերոյ: | 6 |
| | 22 4 | ✠ Կիր. Էջ. Ե. Կիր. զկնի Յիսնակի: Յերեկոյին նախատօն. | 7 |
| | 23 5 | Բշ. Էջ. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն: Յերեկոյեան նախատօնակ: | 8 |
| | | Առ. ըս. լս. Գաւառացի էշ. | |
| | 24 6 | Գշ. Էջ. Ս. Ստեփաննոսի Նախավկային և առաջին մար- տիրոսին: Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս Եկեղ. Տիխիսայ՝ որ ի լանապատին կուսանաց, ուր ամիտիլի մաս նշխարաց—աջ Ս. Ստեփաննոսի: | 9 |
| | | Ռուսաց ճրարալոց Ծննդեան: Լատ. Յալտնութիւն Տեառն: | |
| | 25 7 | Գշ. Էջ. Պահք: Յերեկոյին նախատօնակ: Ռուսաց և Յու- նաց Ծնունդ Տեառն: | 10 |
| | 26 8 | Եշ. Էջ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Ռուսաց և Յունաց՝ 2 օր Ծննդեան: | 11 |
| | 27 9 | Ուր. Էջ. Պահք: Յերեկ. նախատօնակ: Ռուսաց և Յունաց՝ 3 օր Ծննդեան: | 12 |

| | | | |
|----|----|--|----|
| 28 | 10 | Շք. Է՛. Ս. որդւոցն Որոտման Յակովբայ առաքելոյն և 13 Յովաննու Աւետարանչին: | |
| 29 | 11 | * Կիր. Է՛. 2 Կիր. զկնի Յիսնակի. Բարեկենդան Մննդեան պահոց: | 14 |
| 30 | 12 | Բչ. 4՛. 1 օր. Մննդեան պահոց: | 15 |
| 31 | 13 | Գչ. 4՛. 2 օր. Մննդ. պահոց: | 16 |
| | | Լր. 1ւ. Զեմբէր Կոմիտէ: | |

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 0 ժ. 37 ր.

ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Բ. — Այժեղջիւրն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինի և ձախորդութիւններ չատ կբաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, շարձազատ և անբարիշտ կըլինի: Իւր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ որովհետև իւր ամեն բաւականութեանց սիրահար է:

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջանքէլ ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ. պսակուած ժամանակին ևս խանդոտ թէև այս պակասութիւնները միշտ աշխատում է ծածկել: Եթէ չափաւոր և զգուշ լինի, մինչև խորին ծերութեանը կը հասնի:

Դեկտեմբերին ծնուածները առհասարակ իրանց գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգուշ, սիրում են գիտութիւններ, և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութեան: 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են:

Մանսթութիւն. Երբեմն պատահում է, որ «Ճարեցոյց»-իս մէջ դետեղուած եղանակի գուշակութիւնները ճշգոյթեամբ չեն կատարվում, դրա պատճառը պէտք է վերագրել աշխարհագրական տեղադրութեան և զանազան օրերնոյթարանական անակնկալ ու արատաւոր երևոյթներին, նամանաւանդ որոշ ժամանակներում լայանի ուղղութեամբ փչող քամիների—ցիկլոնների և երկրազնդի մթնոլորտի վերաշրջման դէպքերում:

Մ. Այլս...

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

«ԺՈՂՈՂԴԻԱԿԱՆ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԵՑՈՑՅԻ» 1913 ԹՈՒԱԿԱՆԻ

I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ս. ԷՋՄԻԱՄԵՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց Տ. Տ. Գէորգ Ե. ընտրեալ ի 13-ն ղեկաւ. 1911 թ. և Օծեալ ի 1-ն լուլիսի 1912 թ.

- 1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՑ—Սահակ Բ. ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր):
- 2) ՊԱՏՐԻԱՐԳՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԷՄՍՅ—(Թափուր):
- Կ. ՊՈՒՍՈՑ—արքեպ. Արշարունի:

- 3) Ս. ԷՋՄԻԱՄԵՆԻ ՍԻՆՃՈՒ Կաթողիկոսի արքեպ. Տ. Մովսիս սեան:
- » Մեսրոպ եպ. Տ. Մովսիսեան:
- » Սահակ վրդ. Ամատունի:
- » Մատթէոս վրդ. Մաթէոսեան:
- » Յուսիկ վրդ. Զոհրարեան:
- » Բարդէն վրդ. Աղաւելեան:
- Պրովուրբ Փ. Մելիք. Փարսադանեան:

- 4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱՆՆԵՐ
 - ա) ԵՐԵՒԱՆԻ.—Փոխանորդ Թեմակալ առաջնորդ Խորէն եպ. Մուրադրէզեան:
 - բ) ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ.—Քէմի կառավարիչ Եփրեմ եպ. Սուքիասեան:

- գ) ՂԱՐԱՐԱՆԻ.—Փոխան. Թեմ. առաջն. Զաւէն վրդ.
- դ) ՀԱՇՏԱՐԻԱՆԻ.—Փոխանորդ Թեմ. առաջ. Մխիթար եպ. Տէր-Մկրտչեան:
- ե) ՇԱՄԱԽԻ.—Առաջնորդ Թէմի Անանիա արքեպ. Զամագասեան:
- զ) ԲԵՍԱՐԱՐՈՑ.—Առաջնորդ Թեմի Երեմէս արքեպիսկ. Խուրաւիւրդեանց:
- է) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ.—(Թափուր):
- ը) ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, (Թափուր)
- թ) ԵՐՈՊԱՅԻ.—Առաջնորդ Գէորգ Եպիսկ. Ի. Թիւնեան.—Նստում է Մարտէչէ քաղաքում, որտեղ և հայոց մատուց կայ—Ս. Յարութիւն: Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ փարիզում, Մանչեստրում և Մուշուլայում:
- ժ). ԱՄԵՐԻԿԱՅԻ.—Առաջնորդը (Թափուր) նստում է Ութր քաղաքում. որտեղ կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ: Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Յորկում, Բոստոնում, Պրովիտենսում, Լորէնում, Չիկագոյում և Ֆրեզոյում:

Տանկատանի թեմերի մասին տեղեկութիւնները այս անգամ ևս անկարող եղանք ստանալ տարագրելու համար:

II. Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՄԵՌՈՆԸ

Մեռոն բառը ծագում է լուսնակալն «միրո» խօսքից, որ նշա-
նակում է անուշահոտ ծաղկահիւթ:

Քէ երբ կամ ինչ ժամանակ է սկսուել կամ դործածութեան
մէջ մտել ս. մեռոնը հայոց եկեղեցիներում, պատմական ճշգրիտ
տեղեկութիւններ չկան այդ մասին: Սակայն լալտնի է, որ ի հնումն
դեռ ևս Գրիստոսի ժամանակ, անուշահոտ իւզով օծելու սովորու-
թիւնը կար ոչ թէ միայն հրէից մէջ, այլ նաև արեւելեան բոլոր
ազգերի մանաւանդ եղիպտացւոց մէջ, որոնք հանգուցեալներին ևս
զմոտում էին: Իսկ առաքեալները անուշահոտ պատրաստած իւզե-
րով դրոշմում ու քարոզում էին դարձնելով հաւատացեալնե-
րին ի քրիստոնէութիւն:

Միևնոյն ժամանակ հայոց աւանդութիւնը հաստատում է, որ
ս. Էջմիածնի հին մեռոնի անօթում գտնուում է և պահուում մինչև
այժմ մնացած այն խաչը, որ ս. Լուսաւորչից շարունակ ամեն մե-
ռոնօրհնութեան որոշ կաթիլներ թափելով կաթսայում, նոյն չա-
փով նորից լցնում են հին մեռոնի անօթը և այդպէս պահում դա-
րուց ի դարս չարունակ:

Որ IV և V դարերում ս. մեռոնը գործադրում էր հայոց եկե-
ղեցում զրահանապէս—դա հաստատում է և նրանով, որ ս. Մես-
րոպի աշխատասիրած ու կազմած «Մաշտոց» գրքում այդ առթիւ
մանրամասնօյէն գրուած ս. պատուիրում է ս. մեռոնի օրհնու-
թեան ծիսակատարութեան որոշ արարողութիւնը, որով այժմ ևս,
ինչպէս Լուսաւորչու ժամանակ, նոյն կարգով ու հետեողութեամբ
կատարվում է վերոյիշեալ փառաւոր հանդէսը:

Վերջին լիսուն տարուալ ընթացքում ս. Էջմիածնում ս. մե-
ռոնի օրհնութիւն կատարուել է հետեալ թուականներին 1868, 1872,
1875, 1878, 1882, 1886, 1890, 1897 1903 և այս 1912 թուականին:

Ս. Մեռոնի պատրաստելը.—Նախ քան մեռոնի օրհ-
նութիւնը քառասուն օր առաջ մեռոնի կաթսան զնում են եկեղե-
ցու սեղանի վրայ և մէջը լցնում մաքուր բալասան, կաթսան կա-

փարչով ծածկում, վրան քօղ են գցում և այդ օրուանից մինչև հան-
դէսը ամեն օր երեկոցեան ժամերգութիւնից լետոյ որոշուած ընթեր-
ցուածքները, շարականները—կարգ ու կանոնը կատարում: Իսկ
հանդէսից երեք օր առաջ ս. Էջմիածնի վանքի լուսարարապետը,
բոլոր չոր նիւթերը—խէժերն ու ծաղիկները մանրացնում, մաք-
րում, բարակ մազում և բալլամի ու սպիտակ աղնիւ գինով կրա-
կին զնում և որպէս զի լաւ միանան այդ նիւթերը՝ խառնելով ե-
փում են, ապա մաքուր սպիտակ լաթով նորից մաղում, զտում և
այդպէս այդ ծաղիկների հիւթը սոսանձին պահում, մինչև այն օրը,
երբ ս. մեռոնօրհնութեան հանդէսին 2—3 ժամ տեղ որոշ արա-
րողութիւնից լետոյ միայն Ս. Հայրապետը թափում է ս. մեռոնի
կաթսան, տաններկու եպիսկոպոսների մասնակցութեամբ ս. մա-
սունքներով տեսաւագրելով:

Ս. մեռոնի նիւթերը.—Այդ նիւթերի մասին «Արձա-
դանք»-ում 1882 թ. և ներկայ 1912 թ. Կարապետ եպ. ի հրատա-
րակած բրօշխրում թէև լիշուած են, որ 43—45 նիւթերից է բաղ-
կացած. սակայն ինձ թւում է, որ ոչ մէկի մէջ բերած թուերը
պէտք է որ ճիշտ չլինեն, որովհետև որքան ինձ ի մանկութենէ
չալտնի է՝ այդ նիւթերը «մեծի պահոց» օրերի 50 թուերից աւելի
նիւթերից են բաղկացած լինում, ինչպէս և այդ հաստատում է
թղթերիս մէջ վերջերս պատահաբար գտնուած 1866—67 թ. մի
ձեռագիր ցուցակից արտադրած տեղեկութիւններից, որը բացի հա-
վերէն բնագրից այստեղ աւելորդ չեմ համարում մէջ բերել նաև այդ
նիւթերի լատիներէն թարգմանութիւնը, որ հետեալներն են.

1. Սպիտակ աղնիւ գինի Vinum.
2. Ձիթեւու ձէթ Ol olivarium veridis.
3. Արարական բալասան Balsam. Meccae.
4. Ստաւատի ձէթ Ol. lini
5. Պերուվալի բալասան Balsam. perouvia.
6. Հնդկաբնիկ Cocos nucifera.
7. Կիպարիս Cupresus (кипарисъ).
8. Միխակ-Մեխակ Caryophyllus.
9. Հիւ կամ Շուշմիր Cardamonum.
10. Սպիտակ պղպեղ Piper album (бѣлый перецъ).
11. Մառուտակ Glycyrrhisa glabulifera
12. Նարդոս Սրեկեան Angelica Moschata.
13. Մանուշակի արմատ Radix Iridis florentine.

14. Երիցուկ Chamomilla vulgaris.
15. Կակաչ վարրի Tulipa sylvestris.
16. Զառվարդ-դեղինվարդ Rosa lutea.
17. Բալասանի փայտ Balsamodendron.
18. Սմբուլ Eringium Sumbuli.
19. Խարանաֆիլ վարրի միխակ Dianthus ar. narius.
20. ձողպե կամ Մշկընկող Nucis moschata (мушкаты. орехъ)
21. Քարաք Gummi Sandarae.
22. Պասպակ Arilus myristica.
23. Սառձե-հնդի Saurus Cinamoni.
24. Դարսենի կամ Դարիչին Cinamomum.
25. Զանջափիլ Radix Zingiberis.
26. Մաստաքի Gummi Masticis.
27. Հալ-խունկ Gummi ladone.
28. Հռոմի խունկ Gummi varia albani.
29. Ստորկ խունկ (ստաչիս) Styrax.
30. Ծոթրին (քոնդար) Saturea hostensis.
31. Ասարոն կամ Մրուանտակ Asarum Europacum.
32. Մանուշակ անտառի Vio'la odorata.
33. Կարմիր վարդ Rosa Armeniaca.
34. Նունաֆար Nymphaea alba.
35. Նարնջածաղիկ Floris aurantiorum.
36. Նուժա (կիտրոն) Citrus nolulis.
37. վարդաջուր Ag. rosarum.
38. Մուշկ Musches orientalis
39. Ամբար Ambrae.
40. Նարդիս կամ Նոճիա Nargifus.
41. ձապուռ (չաման) Carum Carvi.
42. Ղնի (նոնէլա) Ammomusa paradi.
43. Խնկենի (խնկի ծառ) Rosvella Serratae.
44. Խնկածաղիկ Origanum (Душман).
45. Խնկիկ Fumana cistacea (Ладаное).
46. Եթիօն (եթերի իւղ) Olea aetherea.
47. Լատան Olibarie կամ Ofionae.
48. Պարանակ Matricaria Chamomila.
49. Շուշան վարրի.
50. Քրքում Crocus Sativus.

51. Անթառամ ծաղիկ Gnafolium.
52. Յուռ Aoisylum.
53. Դափնու արմատ Radix Laurus Nobilis.
54. Ռեհան Ocimum Basilicum.
55. Օձափայտ lignium Colubrium.

Մէջ բերելով վերոյիշեալ ցանկը, հետաքրքրութեան համար անհրաժեշտ եմ համարում այդ ցանկում լինուած օձափայտի (lignum colibritus) մասին սրանից 45 տարի առաջ լսածս—հետեւեալ աւանդութիւնը այստեղ մէջ բերել: Իբր թէ հնումն միշտ սովորութիւն է եղել Էջմիածնու միաբան երկու քաջ վարդապետներին գնալ օձափայտ ...ձեռք բերելու և որովհետև այդ օձափայտի թփերի տակ օձերը չառ են սիրում իրենց բները շինել և ահա հէնց այդ ժամանակ, երբ հեռուից նկատու՞մ են օձին թփի արմատին փաթաթուած, լաջողուում է վարդապետներին ձիերին հեծած և ձիերի ոտքերին բրդից պատրաստած քեչաներ փաթաթած զգուշութեամբ մօտենալ քրդից պատրաստած քեչաներ փաթաթած լարը—ուրկանը (арканъ) միանթփին և երկայն չուանից կապած լարը—ուրկանը (арканъ) միանթփին և երկայն չուանից կապած լարը—ուրկանը և անմիջապէս ձին քշելով դամբը հմուտութեամբ զցել թուփը պոկել և անմիջապէս ձին քշելով օձից ազատուել և այսպիսի դժուարութեամբ այդ թուփ—օձափայտը ձեռք բերել:

Չնայելով որ, ինչպէս վերը լինեցի, այս աւանդութիւնը լսել եմ սրանից 45—46 տարի առաջ, սակայն—այս քանի օրերս էլ միքանի հոգուց լսեցի այդ մասին—ուստի թէ որքան ձիշտ է այդ աւանդութիւնը ցանկալի էր ս. Էջմիածնի մեր միաբաններից իմանալ: Այս աւանդութիւնը ինձ աւելի հաւանական է թուում և այն պատճառով, որ զեղարտական գրքերի (Փարմակոլոգիայի) մէջ ևս քի առաջ ունենալով այդ հանդամանքը արտաքցիք և լատինացիք նաև անուանել են Lignum colubrium:

Առաջարկում եմ ձեռնհաս անձանց, մանաւանդ մեր մասնագէտներ՝ տնկարան-Փարմացէլտ պ. Աւագ Սարուխանեանին և բուսաբանութեան ուսուցիչ պ. Ալ. Քիչմիշեանին, համեմատել սոցն սարանութեան ուսուցիչ պ. Ալ. Քիչմիշեանին, համեմատել սոցն ցանկի անուանները հանդուցեալ երիցեանի և կարապետ եպիսկոպոսի ցուցակների հետ լատիներէնի և ռուսերէնի թարգմանութեամբ, սի ցուցակների հետ լատիներէնի և ռուսերէնի թարգմանութեամբ, և եթէ մի որեւէ սխալ կամ անճշտութիւններ են սպրդել կամ տեղի ունեցել սոցն մեր լողուածում, բարեհաճեն լատիներ և լրացնել, որպէս զի ապագայում սխալ մեկնութեանց ու թիրիմացութեանց տեղիք չտրուէր:

Մակ. Չմշկեան

ՄԻՌՈՆՈՐ ՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍԸ Ա. ԵՉՄԻՈՆՆՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30 ԻՆ 1912 Ք.

Այսօր, առաւօտեան ժամը 9-ին, Քիֆ-լիսի կուսանաց մենաստանի այտուեղ ուխտ եկած կոչսերը իրանց մայրապետի առջնորդութեամբ մտան տաճարը և զգեստաւորվելով բարձրացան բեմը ու համրուելով միոսոնի կաթնասան՝ շարվեցին բեմի երկու կողմը:

Այս կոչսերի հազած ժամաշապիկները՝ ծաղկանկար և գեղեցիկ ուրարներով, ինչպէս և նրանց զլխի սպիտակ շղարշները, ծաղիկեայ քօղբը՝ ծածկված զոյնդոյն նկարներով և զարդուզարդարանքները— ոչ թիֆլիսցի ուխտատու հասարակութեան համար բոլորովին չի տեսնված նորութիւն էին ներկայացնում, որովհետեւ ամբողջ Ռուսաստանի հալոց թեմերում այսպիսի զորդարանքներով զարդարված կոչսեր միմիայն գոյութիւն ունեն իշխան Բէհրութեաններին՝ Քիֆլիսում հիմնադրուած մենաստանում:

Յպիսկոպոսները ժողովել էին վեհարան՝ զգեստաւորվելու:

Ուղիղ ժամը 10-ին սկսվեց հանդիսաւոր գնացքը վեհարանից դէպի տաճար՝ Վեհ. Հայրապետի դիմաւորութեամբ, խաչուխաչվարով, վառված լապտերներով և բոլոր կախիկոյտներն էրկկարդ զգեստաւորված ու իրանց ձեռքերում մասունքները բռնած, հեռեհեռ կարգով:

Առաջից գնում էին խաչվառակիւները, լապտերակիւնները և խաչակիւները, որոնց ետևից զպիւրները Յետոյ երկու կարմրազգեստ շաթիւններն իրանց պատմական ցուպերով: Ապտ հայրապետական խաչն ու զսազանա-

կիր երկու վարդապետները: Հոգեւորական դասը— վարդապետներ ու քահանաներ— շուրջառնելով զգեստաւորված: Աջ կողմից գնում էին Խորէն եպիսկոպոսը՝ ձեռքին բռնած անտարանը, Վարապետ եպ.՝ Միոսոնի նիւթերի անօթը, Աշոտ եպ.՝ Սրիսայակէտ հայրապետի անօթը, Յուսիկ արքեպ.՝ ս. Յակոբ Մժմնայ հայրապետի անօթը, Յովհաննէս արքեպ.՝ Լուսատըշի անօթը, Ներսէս արքեպ.՝ Վեհաց փայտը, Զախից՝ Նիբեմ եպ.՝ բալասանի անօթը, Վեսարայ. եպ.՝ հին Միոսոնի աղանեաց անօթը, Մխիթար եպ.՝ Յակոբ առաքելայի անօթը, Սարգիս եպ.՝ Փովմա առաքելայի անօթը, Անանիա արքեպիսկոպոսը՝ ս. Փաղէոս առաքելայի անօթը և Սուրիաս արքեպ.՝ աստուածամուխ ս. Կեղարդը: Յպիսկոպոսներից չետոյ բուրվառակիր երկու վարդապետներ, հայրապետական քօղակիրներ և քրոջակիր չորս սարկաւազներ:

Իսկ ամպհովանու տակ Վեհափառ Հայրապետն էր՝ զգեստաւորված, որի ետևից երկու քղանցակիր վարդապետներ, լուսարարապետը և զաւաղանակիրը:

Բոպէն հետաքրքրաշարժ էր և ժողովրդի տրամադրութիւնը հողեզմալէ: Առանձին հմայք էր պատճառում մայր տաճարի զանգակիւնի զօղանջիւնը և Վորհուսոյ խորին» շարականի երգեցողութիւնը, որը զգալի ու չուղիչ տպաւորութիւն էր թողնում:

«Ողջոյնից» առաջ Հայրապետը բազմելով աթոռին սեղանի հիւսիսային կողմում՝ աջից ու ձախից շրջապատ-

ված 12 եպիսկոպոսներով՝ կատարեց Ս. Միոսոնի օրհնութեան կարգը:

Սուր պատշաճի Աետարանը, աղօթքները, քարոզները, ընթերցուածքներն ու շարականները թէ Վեհափառ Հայրապետը և թէ եպիսկոպոսները հերթով կարդացին: Եւ երբ Հայրապետը սկսեց կարգաւ «Ս. Ահարո» գիրքը՝ լուսարարապետ Վեհաց եպիսկոպոսը բացեց Միոսոնի կաթնայի կափառիչը: Իսկ զպիւրները երգեցին «Եայիւ, Տէր, զգանձդ երկնային» շարականը, որի ժամանակ Հայրապետը թափեց կաթնայի բալասանի մէջ նախ ծաղիկների նիւթերը և ապա «Առաքելոյ աղանոյ» շարականի երգեցողութեամբ թափեց կաթնայի հին Միոսոնը, տեսապիւրով խաչակիւնքելով և խառնելով Միոսոնի անօթը՝ «Օրհնեսցի և քրեցցի միոսոնս այս», և այսպէս կարգով բոլոր մասունքները տեսանադրելով:

Գրանից չետոյ Սուքիաս արքեպիսկարդաց Աետարանը, իսկ Հայրապետը «Պահպանիչ անելով վերջացրեց միոսոնօրհնութեան կարգը, շարունակելով պատարազը:

Պատարագի աւարտումից չետոյ, հանգիստը գնացքով և նոյն կարգով «Որ զշնորհս աստուածային» շարականով

Հայրապետին ուղեկցեցին տաճարից մինչև վեհարանի դրսի դուռը, որտեղ Վեհը «Պահպանիչով» օրհնելով բոլորին արձակեց:

Ժամը 2½-ին սկսվեց հանդիսաւոր ճաշը. ամբողջ սեղանատունը լիքն էր: Սեղանին նախագահում էր նորին Վեհափառութիւնը: Առաջին բաժակը առաջարկվեց Փաղատար Վայսրի, երկրորդը՝ Վայսրուհու և Փաղատաւանդի, երրորդը փոխարքայի և իր ամուսնու, չորրորդը առաջարկվեց Վահափառի, երեսնի նահանգապետի, Հայ ազգի հոգեւորականութեան, միաբանութեան, կոչսերի, վանահայրերի, յանձնաժողովի անդամների: Փօսեցին Անանիա, Յուսիկ արքեպիսկոպոսները, Յուսիկ, Միոն և Մազաուղեան վարդապետները, ըստ նաւասարդեան, Զմիկեան և այլք: Բաժակաճանքի մէջ ընդ մէջ երգեցին «Այսօր երկնայինքն ուրախացան», «Եջմիամիւն ի Հօրէ» «Ռամաստուն կուսանք» շարականները և «Տէր կեցողու զհաս» ու այլ երգեր:

Վեհը թողնելով սեղանը, հիւրերը շարունակեցին և ապա շնորհակալութիւն յայտնելով միաբանութեանը ցրվեցին:

Քղթակց. «Մշակին» Մ 2մշկ..

III. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԵՅԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ:

1913 թ. երկրագնդիս վրայ երեք անգամ արևի_և երկու անգամ լուսնի խաաարումներ կենատուին. որոնցից,

1) Մարտի 24-ին Արևի մասնատր խաաարումն. սկիզբը՝ 7 ժ. 15 ր. երևկ. վերջը՝ 10 ժամ. 12 ր. երևկույեան:

2) Օգոստ. 18-19-ին, արևի մասնատր խաաարումն. սկիզբը՝ 12 ժ. 13 ր. երևկ. վերջը՝ 12 ժ. 12 ր. զիշ:

3) Մարտի 9-ին լուսնի լիակատար

խաաարումն. սկիզբը՝ 12 ժ. 43 ր. զիշ. վերջը՝ 4 ժ. 33 ր. ցերեկ:

4) Սեպտեմբ. 2-ին լուսնի լիակատար խաաարումն. սկիզբը՝ 2 ժ. 15 ր. վերջը՝ 5 ժամին երևկույեան:

Սեպտ. 17-ին մասնատր խաաարումն արևի՝ սկիզբը 6 ժ. 6 ր. զիշ. վերջը 9 ժ. 46 ր. առ:

Այս խաաարումներից Կովկասում նկատելի կլինի միայն լուսնի խաաարումները, այն էլ շատ մասնատր



IV. ՕՂԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

ԷՖԵՄԵՐՂՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1913 ԹՈՒՍ ԿԱՆԻ ՄԱՍԻՆ.

1913 թ. ընթացքում կատարվող երկնային մարմինների—աստղերի, արևի, լուսնի, մոլորակների, շարժման դասստորութեան, դիրքի և նրանց երկրագնդիս վրայ ունեցած ազդեցութեամբ, ինչպէս և տարուայ կառավարիչը—տանուտէրը լինելով խոյ կենդանակերպ համաստեղութիւնը, գուշակվում է, որ տարիս առհասարակ լինելու է ցամաք և ոչ այնքան պտղաբեր: Այդի և որթ տնկելը աւելի չաջող քան ծառեր տնկելը: Եւ թէ և ցորենի առատութիւն և Ասորիքում գինին շատ, սակայն, շատ տեղ, ինչպէս և ի Բարեւոն սով. իսկ Հոռմի կողմերը տնկերի չորանալ: Առողջապահութեան կողմից՝ շատ տեղ համաճարակ հիւանդութիւններ, մարդկանց և չորքոտանի կենդանիների մէջ կոտորած կառավանայ, մանաւանդ ի Հնդկաստան: Դողերոցը (մալիարիայ) կը սաստկանայ: Մեծամեծներին մեծ կորուստ և սինշանատր թանգատը կամ իշխան կը մահանայ. այդ պատճառով այն լշ-

խաններն ու թաղաւորներն, որոնք կշիւ և խոյ համաստեղութեան տակ են ծնուած, աւելի մեծ վիշտ ու նեղութիւն են կրելու: Առհասարակ մարդիկ զգուշանալու են, որովհետև այնպիսի նեղութեան և ճախարհութեան են հանդիպելու, որից, ոչ սէը, ոչ բարեկալամութիւն և ոչ էլ ճշմարտութիւն է տեսնելու, այլ միայն լոկ աւերումն: Իսկ քաղաքական ղէպքերից, թէ և Գլխաթայ երկրից մինչև հիւսիսային ծովը խաղաղութիւն է նախատեսվում, սակայն և թէ հիւսիսային կողմն Նոր աստղ երևայ, արևմուտքում շարժում կը լինի, որից շատ քաղաքներ կը տապալուեն և շատ քաղաքներ էլ իրար հետ կընդհարուեն *):

*) Այս գուշակութիւնը մեր ժողովրդի մէջ իբրև բազմամեայ սովորութիւն չարձած կարծիք, ամբողջովին համառոտած, ի մի ամփոփում և զբարատից աշխարհաբարի փոխադրում զետեղում ենք դանկացող ընթերցողների լոկ հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար:

Ման. Աշխ.

V. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԸՆ

ԻՄԱՍՏՆԵՐ

Ինչպէս կորցրած ժամանակը չի վերագառնում, այնպէս էլ զործադրուած չարութիւնը չի ուղղվում:

Հարստի բաւականութիւնները ձեռք են բերվում թշուառների արցունքներով:

Ամենքը հենց իրանց վիշտութիւնից են դանդաղում, բայց իրանց տղիտութիւնը ոչ ոք չի խօստովանում:

Սղքատ հսկարաւ ամենից շատ հարստութեան մասին կխօսի, իսկ վախկտոր քաջութեան:

Շատախօսը հաղիւ է պատահում որ իր խօսքերը զործադրի, այլ իմաստունն է որ աշխատում է իր խօսքերը իր դործերից շանցնի:

Յրհամարանքը անհամաձայնութիւն է ստեղծում, իսկ սէրը բոլոր մեղքերը ծածկում:

Սէրը թէև մեծ ուսուցիչ է, բայց անչափ անդութ ու պատժող:

Սիրահարուած կիւնը երբէք չի կարող իր արարքների մասին հաշիւ տալ: Սիրոյ գործում բոլորը աւաղակներ են հանդիսանում, տղամարդիկ չար-

ձակվում են, իսկ կանայք կողոպտում: Անօջ սէրն է միայն, որ ձերանալ չդի ոչ:

Ստիպողական ամուսնութիւնը կատարեալ դժողք է, չափոնեական երկպառակութիւն, վէճերի աղբիւր: մինչդեռ սիրոյ ամուսնութիւնը օրհնեցող, դրախտի դուռն:

Նրբ կիւնը տիրութեան մասին սկսեց զանգատուել, դա օ մենահաստատունն է, որ ոչ մի տղամարդ իրանով չի հետաքրքրվում:

Փառասիրութիւնը՝ ամենալաւ նշանն է իր ոչնչութեան:

Մարդու կեանքը այն ժամանակն է միայն բանական, երբ նա իրր ծառայութիւն է հասկաց ում:

Մենք ոչ թէ սպրում ենք, այլ միայն աշխատում ենք որ կարողանանք ապրել:

Նրեք ճանապարհ մարդուն տանում են դէպի զիտութիւն, մտածողութիւնը — ամենապատուականն է, ուրիշին նմանութիւն — ամենահեշտը, իսկ փորձառութեան ճանապարհը — ամենազառն:



VI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Ստամները և ընդերքը առողջ պահելու համար, պէտք է շատ տաք ու սառն կերակուրներից զրուշանալ և կերակուր ուտելուց լետոյ միշտ բերանը մաքրել: Իսկ զիշերները քնելուց առաջ աղաջրով ողողել:

Ս ե ն ե ա կ ն ե թ ի ո ղ ի մ ա ք բ ե լ ը : Որոնք ցանկանում են իրանց սննեակների օղի մաքրութիւնը, նրանք պի-

տի աշխատեն սննեակները հովահարութեան տալով օղի փոփոխութիւն առաջացնել: Եւ թէև այդ կախուած է բնականների չարմարութիւններից, սակայն օրուայ ընթացքում մի քանի անգամ պատահանների բացումը, ու ամենօրեայ վառարանների վառելը, ամենալաւ օղափոխութիւն է առաջացնում և սննեակների օղը մաքրում:



VII. Բ Ժ Զ Կ Ա Կ Ա Ն

ՄԵՂՈՒՆԻ ԽԱՅԹՈՒՅԻ ԳԷՄ

Նախ և առաջ եթէ մեղուի խայթոցը մնացել մարմնի մէջ, պէտք է աշխատել վերքից հանել և այն տեղը մաքուր ձեռքով շփել, որից վերքը ալ ևս չի ուռչի: Ապա ծխախոտի ձեռած միջուկը կամ հենց ծխախոտը ջրով թրջած դնելու է վերքին:

Գի ն ո վ ո թ Ե ա ն դ է մ . — Հարկատու է մաքուր օդ, գլխին սառուց դնել, որպէս զի արեան հոսանքը գլխից դէպի մարմնի ներքին մասերը քաշուի, ոտքերը շփելով հարելով պէտք է տաքացնել, հոտոտել տալ նշաղբի ոգիով (нашатырн. спиртъ) և դրանից տասը կախիլ կէս բաժակ սառը ջրում կաթացնելուց չետոյ խմացնել:

Ս ո խ ի օ դ տ ա կ ա ր ու թ ի լ ը ը . — Թէ և ի հնամն ևս սոխի չատկութիւնը իրբև ու մեղացնող միջոց, բոլոր ազդերին չաչանի էր և մեծ չափով տարածվում էր ու գործադրվում. սակայն նոր բժշկականութիւնը մոռացութեան տակով, անուշադրութեան էր մատնել: Վերջերքս բժշկականութեան մէջ նորից սկսեցին առանձին աշաղբուիւն դարձնել սոխի բուժիչ չատկութեան վրայ, մանաւանդ ջրածոցութեան, չոդապատի և լեարդի հիւանդութեանց դէպքերում, ինչպէս և վերոյիշեալները հաստատում է Առողջապահիկ թերթը: Մեր ժողովուրդը առանց բժշկական ուսումնասիրութեան էլ սոխը միշտ սիրել է և իր կե-

րակուրները մեծ մասը մշտապէս սոխով համեմելով գործադրում:

Կ ո վ ի ծ ծ Ե ր ի Բ ո Ր Բ ո Ք ու մ Ը Բ ժ շ կ ի լ ու հ ա մ ար, պ է տ ք է շ ու տ շ ու տ ծ ծ Ե ր Լ ու ա ն ալ և թ ա ց ու թ ի ն Ե ր ց ա մ ա ք Ե ր ց ն Ե ր ո ց չ և տ ո ց ք ա վ ու ր ի օ ժ ա ն Ե լ Ե ր ո վ (РАМФОРН МАЗЪ) ք Ե լ լ ու է: Եւ որքան կարելի է շուտ շուտ, օրը 5-6 անգամ կթելու:

Ձ մ Ե ո ն Ե ր Ը ձ Ե ո ք Ե ր Ը ա ք Ը ք Ե լ ու գ է մ . — Պէտք է նախ և առաջ գիշերները սաղնով տաք ջրով լաւ մաքուր լուանալ և ձեռքերը մի հինգ-տաս րոպէ տաք ջրի մէջ պահելուց չետոյ մաքուր շորով-լաթով սըրբել ձեռքերը ցամաքացնել: Եւ անմիջապէս մեղրամոմը նշի խղի հետ խառնած և պատրաստած օժանելիքով, ձեռքերը հարել ու օժել, որից չետոյ ձեռնոցներ հագնել: Նոյնպէս և լաւ է գլխիցերինով արորել:

Ի ս կ ձ Ե ո ք Ե ր ի ք ր ա ն Ե լ ու գ է պ ք ու մ, կարտօփի ալիւրով (картофельная мука) հարելը բաւականին օգնում է:

Ձ կ ա ն թ ի լ ը ո վ թ ու ն ա տ ր վ ի լ ու և դ ր ա ն ի ց հ ի ա ն դ ա ն ա լ ու ն շ ա ն ն Ե ր Ե ր և լ ու գ է պ ք ու մ, պ է տ ք է անմիջապէս բժիշկ հրաիրել և մինչև բժշկի հասնելը հիւանդին ձիթապտղի ձէթ (деревян. масло), կտաւատի վշի կամ մի որ և է բուսական ձէթ խմացնել:

VIII. Տ Ա Ն Տ Ի Կ Ի Ն

Յ ա ր դ է (СОЛОМЕННАЯ) չ ու ա ն — Վարելի է պատրաստել հետեւեալ կերպիւ, որը ոչինչ ծախք չի պահանջում: Նախ և առաջ որպէս զի չարդի ձղնոտները ոլորելիս չկտորատուի առաջուց ջրում թրջում են և չետոյ ոլորում ու չուան պատրաստում: Իսկ եթէ կպրի մէջ թրջուի, աւելի պինդ և դիմացկուն է լինում:

Ժ ա ն դ ի Ե ի ծ Ե կ Ե դ տ Ը ս պ ի տ ա կ Ե դ Ե ն ն Ե ր ի ց մ ա ք Ե ր Ե լ Ը: Ժանդի կեղտից առաջացած բծերը պէտք է կիրտոնի ջրով թրջած աղով պատել և ալոպէս օրուզիչեր թողնելուց չետոյ, տաք ջրով լուանալ, որից բոլոր բծերը անհետանում են:



IX. Խ Ո Յ Ա Ն Ո Ց

ԿԱԹՐ ՊՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Կաթը ապակե ամսնում լցնելուց և մաքուր խցանով խցելուց լետու, ամանը դնում են սառը ջրով լեցուն պղնձի մէջ և ծածկում թաց դենջակով, որի ծայրերը պէտք է պղնձի ջրի մէջ լինին կախ տուած: Այդ դենջակի ծայրերից տարածուած հովից և արտաքին տաքութիւնից — շողից կաթը աղտո մնալով չի փչանում: Բայց պէտք է մութ և չոր տեղում պահել:

Մ ս ի թ ա ր մ պ ա հ ե լ Ը . — Ով որ ներքնատուն չունի, շոգ ժամանակին հում միսը պէտք է քայցախի մէջ լաւ թրջի, պինդ փաթաթի և այդպէս թողնի մինչև այն ժամանակ, որ քաւելի սառը տեղ գտնուի պահելու: Եվ ամ միսն ևս պահարանում պահելուց առաջ պէտք է քայցախով թրջել:



X. Գ Ի Ի Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Առհասարակ բոլոր կենդանիները երբ հիւանդանում են, չպէտք է դուրս թողնել, կամ նախիրն ուղարկել, այլ տանը թողնել: Եւ եթէ կասկածելի հիւանդութեան նշաններ են նշմարվում, անմիջապէս պէտք է աշխատել առողջներից առանձնացնել:

Բոսի որդերին ներդործի, ամենից առաջ պէտք է կենդանու կաշին, կեղտից, իւրից և թարախից լաւ մաքրել, կանաչ սապոնով (зеленное мыло) լուանալով. որից լետու դեղատանը պատրաստած 2 ֆունտ ծծմբա խմոր-խաշից (сѣрной пачени), մի դոյլ (ведро) ջրում բացարած-խառնած, կենդանու մարմինը լուանալ: Այս հեղանիութի դործածելուց, որդերին թունաւորող դաղ է առջանում, որից և որդերը ունենանում են:

Կ ե ն դ ա ն ի ն ե լ ի ք ո ս Ը , առաջանում է առանձին տեսակ քոսի որդերից (клевцы), որոնք գտնվում են թէ կաշու վրայ և թէ հենց կաշու մէջ: Բոսի բժշկելը այնքան էլ հեշտ չէ. կենդանին լրարում-մաշվում է, մարմինը թարախներով լցվում, մաղը թափվում ճաղատված: Այս անտանելի հաւանդութիւնից կենդանին հազտութիւն չունի, ոչ կարողանում է ոտքի կանգնել, ոչ երկուսը ժամանակ հանդիստ քնել, ոչ ուտել, և վերջի վերջոյ նիհարելուց ու ոյժից բնկնելուց փչանում սատակում: Որպէս զի դեղը

Կ ո վ ե լ ի ք ա ր ա կ ա ց ա ը դ ա ն աղան նշաններով է արտայայտվում. հաղ են տնենում, լրարում-մաշվում են. պատահում է որ գերանում էլ են: Բարակայատու կովերը մեծ մասամբ անրեր են լինում և կաթը քիչ են տալի: Այս կովերի կաթի հում խմելը անչափ վտանգաւոր է, պէտք է զգուշ մնալ:



XI. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1912 թուականի գաղնանը Քիֆլիս եկաւ մանկահասակ Վալօղիա Զուրբեց-կին, որը իր հսկայական լիշողութեամբ կարողանում էր բաժանման, բազմապատկման, հանման և գումարման չորս գործողութիւնները մտքի մէջ, առանց թղթի վրա գրի առնելու կատարել: Նա 5 տարեկան և 11 ամսական էր: Երեխան իր հօր հետ ներկայանալով «Մշակի» խմբագրութիւնը, իրան տուած բոլոր հարցերին ուղիղ պատասխանեց: Մատեմատիկական հաշիւներէց զատ փոքրահասակ Վալօղիան ծանօթ է նաև ռուս լեզուի քերականութեան բոլոր կանոնների հետ: Քիֆլիսի արական I-ին գիմնադրացի վերապետուշը երեխային տուել էր մի վկայական, որով վկայում էր նրա հսկայական լիշողութեան մասին, համարելով այդ օրինակելի բոլոր աշակերտների համար: Յիշենք նաև այն, որ երեխայի մայրը հայուհի է Տէր-Աստուածատրեան աղգա-

նունով: Խմբագրութեան մէջ նրան տրվեց բազմապատկելու 3672 թիւը 1254-ով, և նա տուեց նրա հեշտ պատասխանը, այն է 4.604,688: Եւ այս հաշիւը նա արաւ հինգ բուլէի ընթացքում մտքի մէջ: Բոլոր գիմնադրաներում և զպրոցական հաստատութիւններում իր սէանները տալուց լետոյ Վ. Զուրբիցկին զուրս եկաւ հասարակութեան առաջ Քիֆլիսի Զուրալովի թատրոնում: Երեխան ծանօթ է նաև աշխարհագրութեան, գերմաներէնի և այլ առարկաների հետ:

Հ ա զ ու ա գ է ս յ պ տ դ ա բ ե ը ո ը ղ ե ծ ն ու թ ի ւ ն: Աիֆերֆելդ քաղաքում զիւղացի Վալլբուրգ Վաստների կինը ծնեց քսաներորդ երեխան: Ծննդկանը—մայրը ընդամենը 40 տարեկան է: Անդրանիկ որդին 28 տարեկան: Բոլոր երեխաները տղաներ են և ամենքը կենդանի ու առողջ:



XII. Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ա Կ Ա Ն

ՍՈՒՆԴՈՒԿԻՆՅ ԴԱՐՐԻԷԼԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ

(Բաց գերեզմանի առաջ)

Ով դուն ստիղծագործ մի բուն քաղկցի,
Հալալ «Պէպօյ»-ին ստիղծող մի՞՞ վարպետ:

Սղիղ Գարրիէլ, անմահ հայ Գաղա,
Մաղալու զրոյ, մի՞ք «Համալ» աղա:

Ի՞նչ «Մնաք բարով», էս ո՞ւր հեռանում,
Ծնւած քաղկեմէղ երկինք իս թռչում.
Ու շառը վուխոս, մի՞ղ քեսիրներուս,
Եսէնց յուսահատ, անտէր ի՞նչ թողնում:

Քանի օր առաջ, վունցոր մէ փաշա,
Քաղկի գղալը զլիսից քէշ դրած՝
Սէլը անում շախտի, ուրախ համաշա,
Սօլլալ—Վուկիա՝ ոտից տակ առած:

Էսօր կի էստի կուրօլում սլտոկած,
Շուրջը բոլորած, տեսանք կատարած,
Վունցոր ասիլ է մի՞ղ Սայաթ Նովա,
Աշխարքս ում մնաց, վուր ինձ քի՞չ մնաց:

Հալն ու ալալը, ջրատարներուս,
Լաղաթին տիղեակի, քննում, իմանում.
Մի՞ր դարդն ու ցալը լուս աշխարք հա-
նում, Գուրծով—ղալմովդ զի՞ղ դարման անում:

Մի՞ր հայ-բրիստոնին, ուրիշ ասկերուն,
Գրած խաղերովդ իստակ արմցնում.

Մի սիրտ ունեցող ուրացողներուն,
Թխտորի բիմով, մէյդան շպլտում:

Միտը դաղղող կտակիդ խօսքիւր,
Տանջւած հայ-ասկիդ ու քաղկիդ համա.
Բաց կօնէ անխիղճ, մարդու աչքիւր,
Վուր իր սարքովի կինքը հասկանայ:

Ո՞վ պիտի զրէ, սրամէն դէնը,
Քիֆիլիցու լիղտով, մի՞ր շառն ու խէրը.
Ճշարիտ մարդուն վուտել կանգնեցնէ,
Մարդգաղաններու սիրալը ռահմ զցէ:

Ղուրթ է մտնում իս սառը գերեզման,
Գնացած ճամբովդ էլ յի՞ղ չիս դառնայ.
Մագրամ մոգոնած, զրած տիպերով,
Անմահ կու մնաս անվիրշ դարերով:

(ՅՈՂՈՎՐԴԻՆ)

Գուք էլ փախախտով, չուխով «Պէպօյէք»,
Գարրիմանդ սրտով, էստի ուխտ արէք.
Վունցոր Գարրիէլին, Ձիւր ուտով բերիք,
Ենէնց «Պէպօյին», արցան կանգնեցնիք.
Մրա լիշատակը միշտ անջինջ պահիք,
«Աստու ողորմին», անպակաս անիք:

Մ. Զմշ.

22 Մարտի 1912 թ.

ՈՒՂԵՐՁ

«ՄՇԱԿԻ» ԳԱՌԱՍՆԱԾԵԱՅ ՅՈՐԵԼԻԱՆԻՆ:

Տխտանին հայոց մտաւոր կեանքի,
Ազգիս իղծերի, թարգման ուսուցչին.
Ժրաջան «Մշակ» անդրանիկ լրագրին,
Ենորհաւորութիւնս քառասնամեակին:

Այսքան տարիներ, շարունակ գործում,
Խաւարն ու նախանձը հայի մտրակում.
Գաղափարներդ ամեն տեղ սփռում,
Ցաւում վշտանում, բողոք բարձրացնում:

Փուշ ասպարէզում, հայ գրականութեան,
Բազմաթիւ թերթեր, թէև լոյս սեռան.
Բայց անհետացան, որպէս ասուպներ,
Իսկ ինքդ մնացիր կանգուն անվահներ:

Ո՛վ երրորդութիւն կազմող վեհ ուժեր,
Արիդ Քալանթար ժիր աշխատասէր.
Գրչով մարտնչող Համբարձում ապէր,
Անընդհատ գործող համեստ Յովհաննէս:

Հակառակորդներ, թէև ունեցաք,
Շատերն խոչնդոտ իսկ հանդիսացան.
Բայց ծանր խաչը, հայ խմբադրութեան,
Տարաք անվհատ ու անդաւաճանս:

Հայ-ժողովրդի ամեն խաւերից,
Բազմաթիւ ներկայ այլազգիներէց.
Տեղում են ձօներ, բեղմնալից կեանքին,
Խրախոյս ու գովեստ, դառն աշխատանքին:

Հողով ներշնչուած, սիրով շաղկապուած,
Քալանթարդ՝ լոյս վերածնութեան.

Համբարձումն պաշտպան լոյս խաղա-
ղութեան,
Յովհաննէսն սէր, համերաշխութեան:

Քրտնաթոր և Դուք, աշխատակիցներ,
Միարան սրտով, նորից զօրացէք:

Նախանձողներին պատկառանք ազդէք,
Շարունակ այդպէս ասողեր ցոլացէք:

Ձեր բաց ճակատով, լուսոյ ջահ գար-
ձէք,
Ուղղեցուց փարոս «Մշակ»-ին կանգնե-
ցէք:

Խարխալ ամբոթեան, դուք հանդիսա-
ցէք,
Նոյն իսկ տօնելու, հարվումեակներս:

Փառաւոր տօնիս, փայլուն հերոսներ,
Ալեոր «Մշակի» քաջ ղեկավարներ.
Մաղթում ենք Ձեզ կեանք, երկար տա-
րիներ,
Յախտեան ընդ միշտ, կեցցէք ու կեց-
ցէք:

Մ. Զաշկ.

20 մայիսի 1912 թ.




† ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ
(Վախճ. Մարտի 22-ին 1912 թ.)



† ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նրա մահուան 20-ամեայ տարեդարձի յիշատակին



Ա. ԲԱՆՆԹԱՆ
(Կողմաբար նկարագրվել)



ԱԼԵՔԱՆԴՐ ԲԱՆՆԹԱՆ




ՀԱՄԱՐՉՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ



ՀԱՄ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
(Երիտասարդ ժամանակ)



ՅՈՒՆԱՆՆԷՍ ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ



ՅՈՒՎ. ՏԷՏ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
(Երկուստարը ժամանակ)



Գ. Արծրունու թիշկը եւ մտերիմ զարեկամը
Բժշկապետ ՅՈՒՎ. ԳԱՍՊԱՐԵԱՆՑ

Գ Ո Վ Ք

«ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՆ

(Թիֆլիսի բառարանով մայիսի 27-ի բանկէտում),

Ամակդար «Մշակի» քառասուն տարուայ, Խմբագրութիւնը դառած բուրաստան, Էս ուրախ տօնը շնորհում իմ սրտանց. Ելած ծաղիկերով, բսած բացեւած. Աշխատող-գրող Երրորդութենիդ, Ամակդարները շուրջը բոլորած, Յանկամ էլ դար կինք; սէր ջախջախութիւն: Վունցոր սուսանբար, ունան փշփշած:

Փառք սլատիւ «Մշակի» ֆալանթար Աղիդ, Ֆալանթարդ հօ շողան զարթարուած. Համբարձում բիձիդ, և զպէր Վանօյիդ. Համբարցումս իսկ, Եստաման ծաղկած, Զիր փարջներով ուժ, կարողութիւն, Վանօս մանուշակ թփերում ծածկուած:

Միշտ էսէնց տօնիր, տօնինք միաբան, Վունցոր Հին վարվան, շնորհում իմ Իս էլ, «Մշակի» հիմնողին անմահ յիշատակ. Զիդ էլ ստղութիւն, վար լսիք ինձմէն. Եստաման ծաղկած, Եստաման ծաղկած, Եստաման ծաղկած, Սիրտդ սրտերը, զօրանան կեցցէն:

Բարաբալլա դալմի, իսկ փանջաններ, (Թողովրդին) Դուք անմութանաթ, Հարբաշ մշակներ. Ի՞նչ է իք սուս կացի ալբանիւրդ խել, Ղուրթ է Ձիդ ննդա խաթալու վուխտը, Մայինց մէ բերան ձէն տուէք Դուք էլ Վանօս մանուշակ թփերում ծածկուած, Միր ջան «Մշակը», աշխատողները, Սիրտդ սրտերը, զօրանան կեցցէն:

Բլրուլը վաղուց թոսած գնացած, Մ. 2մշկ. Ելլվան ձէնը միր անկճին դցած. 27 մայիսի 1912 թ. Բալբաղ-ղրօշակը կտուցով տնկած, Սնդին մտքիրը վուղջ աշխարհ փուլած:



ԴԵՐԱՍԱՆ ՏԷՐ-ԴԱԽԹԵԱՆ
(40-ամեայ յօբէլեանի սովոր)

| | | | | | | | | | |
|----|----|----|----|----|----|----|----|----|-----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 |
| 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 |
| 51 | 52 | 53 | 54 | 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 |
| 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | 67 | 68 | 69 | 70 |
| 71 | 72 | 73 | 74 | 75 | 76 | 77 | 78 | 79 | 80 |
| 81 | 82 | 83 | 84 | 85 | 86 | 87 | 88 | 89 | 90 |
| 91 | 92 | 93 | 94 | 95 | 96 | 97 | 98 | 99 | 100 |

XIII Վ.Ա.ՃԱՌԱՌԱԿԱՆԱԿԱՆ

Հասարակ պարտամուրհակի օրինակ
Թիֆլիս, 1 հունիսի 1903 թ.
Մուրհակ 1000 ռուբլի արծաթի
Յուրիսի մէկին, հազար ինն հարիւր
տասն եւ երեք ամի, պարտաւոր եմ վճարել
Թիֆլիսի 2-րդ-կարգի վաճառական
Յովհաննէս Մաթէոսեան Վիրակոսեանին
հազար ռուբլի արծաթ, որը ես նրանից լիովին ստացել եմ
Ս տ ո ղ ր ա ղ ռ լ թ իւ ն—**Թիֆլիսի քաղաքացի Սիմէոն Պողոսեան Նիկողոսեան**

ՌՈՒՍԱԿԱՆ ԶԱՓԵՐ

Մակերեւոյթի.

| | |
|----------------------|------------------|
| Քառակուսի մղոնը ունի | 49 քառ. վերստ |
| » վերստը » | 250,0 (0 « սամէն |
| » սամէնը » | 9 » արշին |
| » արշինը » | 16 » վերշոկ |
| » սամէնը » | 49 » ֆուտ |
| » ֆուտը » | 144 » զիւլյիմ |
| Գետեատինը ունի | 2400 » սամէն |

Բովանդակութեան չափեր.

| | |
|-------------------------------------|------------------|
| Քորանարդ մղոնն ունի | 343 խոր. վերստ |
| » վերստն » | 125 միլ. խ. սամ. |
| » սամէնն » | 27 խոր. արշին |
| » » » | 343 » ֆուտ |
| » արշինն » | 4096 » վերշ. |
| » ֆուտը » | 1728 » զիւլյիմ |
| » արշինն » | 21,952 » » |
| » սամէնն » | 110,592 խ. վերշ. |
| 592,704 խոր. զիւլյիմ. 1 միլիոն խոր. | |
| հարիւրերորդ սամէնին (1 сот.) | |

Ընդեղէնների չափեր.

| | |
|------------------|------------|
| Լաստը ունի . . . | 12 չետվերտ |
| Ձետվերտը . . . | 8 չետվերիկ |
| Ձետվերիկը . . . | 8 զարնցի |

Հիդուկների չափեր.

| | |
|--|-------------|
| Տակաուն ունի . . . | 40 վեդրո |
| Վեդրոն » . . . | 10 շտոֆ |
| » հաւասար է . . . | 30 դրվ. ջրի |
| Շտոֆը կամ կրուժկէն ունի 2 շիշ (բուժիչ) | |

Գեղատան քաշեր.

| | |
|---------------------------|---------------|
| Գրուանքան ունի (84 մս.) . | 12 ունց |
| Ունցիան » . . . | 8 դրախմ |
| Դրախման » . . . | 3 սկրուպուլ |
| Սկրուպուլը » . . . | 20 զրան |
| 1 զրանը » . . . | 1 ցորեան քաշ: |

Ք Ա Շ Ե Ր Ը

Չանալան երկրների քաշերը

| | |
|----------------------|--------------|
| Անգլիայի 1 վաճ. դրվ. | 16 ունց. հա- |
| ւասար է ուսաց 1 դրվ. | 10 մսխ. |
| Ֆրանսիացւոց 1 դրվ.— | » 1/2 » |
| կիլոգրամը . . . | 1 » 41 » |
| Պրուսիայի 1 ֆունտը 1 | » 13 » |
| 1 ցէնտնէր. . . | » 1/3 » |
| Ձինաստանի 1 դրվ. 2 | » 40 » |
| Նապոնիայի 1 մուէ 57 | » 1 » |
| 1 կատտին . . . | 1 » 42 » |



† Ա.Է.Ք. ՄԱՆԹԱՇԵԱՆ


(Մահուան տարեդարձի յիշատակին)



Տաճկաց սուլթան
ՄԱՀՄԷՏ V.



Յունաստանի թագաւոր
ԳԷՈՐԳ. I.



Զերնագորիայի թագաւոր
ՆԻԿՈԼԱՅ I.

XIV. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Երկրագնդի մակերեսի 1/10 մասն է
 զառակ. կիր մտեր (մի կիրոմտորը 469
 սաժէն է):

ՅԱՄԱՔԸ՝ Երկրաշերտի մասն է
 կաղնում -- 2,453,804 Հող 6,802,634
 ջուր:

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Երկրաշերտի վրայ բնակում են
 մոտ 1671 միլիոն բնակիչ, որոնցից Եւ-
 ռոպայում 389 միլ., Ասիայում 870 միլ.,
 Աֆրիկայում 212 միլ., Ամերիկայում 130
 միլ. և Աւստրալիայում 7 միլիոն:

Երկրաշերտ ազգերը խօսում են
 3600 լեզուից աւելի:
 Բոլոր կրօնները երկրաշերտի վրայ
 1002-ից աւելի են:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ

| | | | |
|--------------------------|-----|------|--------|
| Կաթոլիկներ | 276 | միլ. | } 586 |
| Քողոքականներ | 177 | » | |
| Ուղղափառներ | 116 | » | |
| Այլ և այլ քրիստ. | 17 | » | |
| ՀՍՅԵՐԸ 5 միլիոն են: | | | |
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ | 221 | » | — |
| ՀՐԷԱՆԵՐ | 11 | » | — |
| ԿՈՒՊԱՇՏՆԵՐ | | | |
| Բուդայականներ | 703 | » | } 1088 |
| Բքամիականներ | 127 | » | |
| Ճետիլներ | 246 | » | |
| Շնորհաւորներ | | | 1686 |


ՄԱՐԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՋԻՆ ԹԻԻԸ
 Մինչև 60 տ. Հասն. են 100-ից 6 մարդ
 » 80 » » 500 1 »
 » 100 » » 1000 1 »

Մեծահասակներն արեւելքում են 33
 միլ., այսինքն ամեն օր 96 Հազար մարդ,
 ամեն մի ժամում 3730 միլ., ամեն մի
 րոպէում 60. մի վայրկեանում մի Հոգի:
 Մեծահասակներն արեւելքում են 42 միլ., այս-
 ինքն 9,500,000 աւելի, քան մե-
 նում են:

Պատահում են 82 միլ., և 130 մար-
 ղուն մի պատկէ զարիս:

ՄԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԱԶԳԵՅՈՒ- ԹԵԱՄԲ

Մեռնում են — շողորականներ 4, 60/0
 Այգեականներ — 5, 6. Կալուածատերեր —
 6, 1. Երկրագործներ — 7, 1. Չկնորս-
 ներ — 3, 3. Հիւաներ — 8, 8. Փաստարան-
 ներ — 7, 5. Կողմակարներ — 9, 3. Կերա-
 սաններ, ճարտարապետներ և Վիճա-
 գրողներ — 8, 4. Հայավաճառներ — 8,
 1. Կարբիներ — 9, 3. Վաճառատնի-
 րում և ապահովագրական զրասնեա-
 կում ծառայողներ — 10, 5. Կերձակ-
 ներ — 10, 7. Գրաշարներ — 11, 1. Բժիշ-
 կներ — 11, 6. Ստագործներ — 12, 2.
 Նատատիներ — 14, 2. Կառապաններ — 15,
 4. Հանքագործներ — 15. Փողոցային ջրը-
 վիչներ — 20, 2. Հիւրանոցներում և
 թէյարաններում ծառայողներ — 22 — 6.



Սերբիայի Թագաւոր
ՊԵՕՏՐ I.



Ռուսիայի Թագաւոր
ՓԵՐԴԻՆԱՆԻ I.

XV. ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆԻԻՍ ՆՃԱՆԱԽՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԵՐՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ

| Անունները | Տիրացուող կրօնը | Պետութեան Գլուխը | Տարածութիւնը ք. քիւ. | Բնակչաց թիւը | Մայրաքաղաքները |
|-------------------|-----------------|------------------|----------------------|----------------|----------------|
| 1 Սրբաբաժնի | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,002,000 | Սիւլան |
| 2 Սրբաբաժնի | Քրիստոնէական | Փիղոսէրա-Սիլոր | 2,835,969 | 6,003,000 | Բուր-Ալեքոս |
| 3 Միամ | Սնդկ. եկեղ. | Մեարիէ Տամ-Տալ | 230,000 | 7,004,000 | Գուլէթի |
| 4 Միգլիա | " | Գէորգ V թագ | 314,628 | 47,000,000 | Լոնդոն |
| " Գաղթական | " | " | 24,964,096 | 401,000,000 | " |
| 5 Աւարո-Հունդ. | Կաթոլիկ | Յրանց-Յոյսեփ | 676,667 | 51,000,000 | Վենետիկ |
| 6 Աւրաբաժնի | Մահմեդական | Խալիֆուլ-Խան | 550,660 | 5,201,000 | Բաքու |
| 7 Բելուժաժնի | Մահմեդական | Միր-Սոլտան | 315,015 | 1,500,800 | Գերա |
| 8 Բելուժաժնի | Կաթոլիկ | Լէօպոլդ II. թագ. | 29,457 | 7,200,000 | Բրիւսել |
| 9 Բոլոնիա | Օրթոդոքս | Յերոնիմոս Եպիս. | 99,873 | 5,301,090 | Սոֆիա |
| 10 Բոլոնիա | Կաթոլիկ | Նախ. Յ. Պէթիս. | 8,337,213 | 16,000,000 | Բիւրնախիւր |
| 11 Բուխարա | Մահմեդական | Սէյիդ-Աբդուլ Եմ. | 239,000 | 11 1/2 մլլ. | Բուխարա |
| 12 Գերմանիա | Աւետարան. | Վիլհելմ II. | 540,418 | 74 " | Բերլին |
| 13 Հարկաւոր | Հայադաւան | Մենէլէք II. | 508,280 | 9 " | Գնդար |
| 14 Հրանդիս և զաղ. | Բողոքական | Վիլհելմինա. | 2,036,291 | 6 մ. զաղ. 40 մ | Հաագա |
| 15 Յունաստան | Օրթոդոքս | Գէորգ I. | 68,688 | 2 1/2 մլլ. | Աթենք |
| 16 Գանիա | Լիւթան. Կաթոլիկ | Փրիւրիս VIII. | 232,302 | 3,500,000 | Կոպենհագեն |
| 17 Եգիպտոս | Մահմեդական | Սրբաբաժնի | 2,000,000 | 20,833,000 | Կայրօ |

| | | | | | |
|------------------|--------------|------------------|------------|----------|---------------|
| 18 Իտալիա և զաղ. | Կաթոլիկ | Սելսոս III թագ. | 1,233,817 | 21 մլլ. | Մադրիդ |
| 19 Իտալիա | Կաթոլիկ | Վիկտոր-Եմմ. II. | 286,588 | 36 " | Հռոմ |
| 20 Զինաստան | Կաթոլիկ | Յիւս. Վոյտ. | 11,574,356 | 390 " | Պեկին |
| 21 Կոլումբիա | Կաթոլիկ | Բաթ. Նունէյ | 1,118,100 | 4 " | Բոգոտա |
| 22 Կոլումբիա | " | Բէլլ. (Թագ.) | 2,735,158 | 22 " | Բոնա |
| 23 Ռուսաստան | Օրթոդոքս | Նիկոլայ II կայսր | 20,666,445 | 160 " | Ս. Պետերբուրգ |
| 24 Կորէյա | Կաթոլիկ | Յայան, պրանկ | 218,192 | 12 " | Սեւլ-Կեոնգ |
| 25 Մեկսիկա | Կաթոլիկ | Նախագ. Գիլգ | 1,946,292 | 13 " | Մեքսիկա |
| 26 Մարոկո | Մահմեդական | Մուլէ. Է-Հասան | 816,000 | 8 " | Յէյ |
| 27 Պարսկաստան | Մահմեդական | Շ. Ա. Տէյ. Միլլա | 1,648,125 | 9 " | Թեհրան |
| 28 Պերու | Կաթոլիկ | Նախ. Երմանդէս | 1,049,970 | 4 " | Լիմա |
| 29 Պորտուգալիա | Կաթոլիկ | Հասարակապետ. | 89,143 | 14 " | Լիսաբոն |
| 30 Ռումինիա | Օրթոդոքս | Կարլու I. | 129,947 | 6 " | Բուքարէշ |
| 31 Սերբիա | Օրթոդոքս | Պետարու I. թագ | 48,586 | 3 " | Բելլգրադ |
| 32 Սիամ | Բուդդայական | Չուլալոնգկորն | 633,000 | 10 " | Բանկոկ |
